



## ՏԵՔՍԻԼԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ.

### ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՀԱՅԵՑԱԿԵՏԸ

DOI: 10.52174/2579-2989\_2023.2-63


**Հիմնաբառեր.** կրթական ծրագրեր, տեքստիլ արդյունաբերության զարգացում, տեքստիլ արդյունաբերության կառավարիչ, տեքստիլ արդյունաբերության ոլորտի մագիստրոս

### Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ»  
հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պեղական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ: 2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրատարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

 <https://orcid.org/0000-0001-8888-045X>

Տեքստիլ արդյունաբերության՝ որպես ՀՀ տնտեսության ենթաճյուղերից մեկի արագ զարգացումը ենթադրում է, որ ոլորտում համապատասխան մասնագետների պահանջարկը տարեցտարի ավելանալու է, հետևաբար՝ նման կադրերի պատրաստումը ժամանակի հրամայական է: Պայմանավորված այն հանգամանքով, որ նախկինում չենք ունեցել այս բնագավառի կրթական ծրագիր, պետք է առաջնորդվել տեքստիլ արդյունաբերության կառավարման ոլորտում մասնագիտական չափանիշներին համապատասխան միջազգային կրթական ծրագրերի ներդրմամբ՝ փորձելով տեղայնացնել դրանք՝ առավելագույնս հաշվի առնելով ոլորտի զարգացման սաղմնային փուլը և զերծ մնալով ցնցումներից: Այս փուլում տեքստիլագործական կրթության վերածնունդն ապահովելու կարևոր նախապայման են մասնագետների վերապատրաստումները զարգացած ոլորտային կրթական համակարգ ունեցող երկրներում:

Տեքստիլագործական կրթության «վերակենդանացումը» ՀՀ-ում ժամանակի հրամայական է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հագուստի և հագուստի պարագաների արդյունաբերությունը ՀՀ արտահանմանն ուղղված 11 ռազմավարական ոլորտներից մեկն է և, որ ամենաէականն է, երկրում զբաղվածության ապահովման կարևոր աղբյուրը (կանանց ավելի քան 90 տոկոս ներգրավվածությամբ, 2020 թ. ոլորտում աշխատել է 7400 մարդ կամ 1,5 անգամ ավելի, քան 2017-ին): Ոլորտը, 2021 թվականին ունենալով շուրջ 6 մլրդ դրամի շրջանառություն, Հայաստանի ար-

դյունաբերության կարևոր ենթադրույթից է՝:

Վերջին 10-20 տարում ՀՀ տեքստիլագործության ոլորտում սկսել են ենթագործունեություն ծավալել խոշոր արտադրողներն ու հայտնի ապրանքանիշները: Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի տվյալներով՝ 2021 թ. խոշոր հարկատուների ցանկում ընդգրկվել է 11 տեքստիլ ընկերություն (2017 թ.՝ 8 ընկերություն): Ոլորտն ունի արտահանման մեծ ներուժ<sup>2</sup>:

Տեքստիլագործության զարգացման նպատակով 2023-2026 թթ. նախատեսվում է ոլորտին հատկացնել շուրջ 14 մլրդ դրամ (մոտ 35 մլն դոլար): Միաժամանակ, ակնկալվում է, որ, արտադրողականության աճի շնորհիվ, ձեռնարկությունները կկարողանան բյուջե վճարել մոտ 19 մլրդ դրամ (մոտ 48 մլն ԱՄՆ դոլար): Հայաստանի տեքստիլ արդյունաբերությունում գործում է շուրջ 260 ընկերություն, որտեղ, ինչպես արդեն նշել ենք, աշխատում է մոտ 7400 մարդ (հիմնականում՝ կանայք)<sup>3</sup>:

Տեքստիլ արդյունաբերությունը Հայաստանի ամենաարագ զարգացող տնտեսական ենթադրույթից մեկն է, որը գործում է ստեղծագործական, բիզնեսի և տեխնոլոգիայի ոլորտների խաչմերուկում: Ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ներգրավել լավ պատրաստված, ժամանակակից և «բազմակողմանի» մասնագետների, որոնք կկարողանան համատեղել ստեղծագործությունը, տեխնիկական և մասնագիտական գիտելիքն ու հմտությունները միջազգային շուկայի ներկայիս պահանջների հետ<sup>4</sup>:

Այժմ ՀՀ կառավարությունը ոլորտի առնչությամբ, որպես առաջնահերթություն, սահմանել է 10 հիմնական ուղղություններ, մասնավորապես՝ բարելավել տեքստիլ ոլորտի աշխատողների մրցունակությունը, օպտիմալացնել և արդիականացնել բիզ-

նես գործընթացները՝ նպաստելով արդյունավետության և արտադրողականության մակարդակի բարձրացմանը, արդիականացնել տեքստիլ արդյունաբերության արտադրական օբյեկտները՝ ներդնելով բարձր տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն ավելի բարդ և բարձր ավելացված արժեքով արտադրանքի ստեղծմանը, ապահովել և խրախուսել հայկական ապրանքանիշների ներկայացվածությունը նոր սպառողական շուկաներում և այլն:

Այսինքն՝ կրթական մակարդակի բարձրացումը նախանշված է ոլորտի զարգացման կարևոր բաղադրիչների կազմում:

Առաջիկայում Հայաստանի քոլեջները կհամալրվեն նոր սարքավորումներով, կընդլայնեն արտադրական պարապմունքները (Գերմանիայում հայտնի «կրկնակի կրթության մոդելի» համաձայն): Վերջապես, քոլեջներն ու համալսարանները կառաջարկեն վերապատրաստման ծրագրեր ինժեներների և տեխնոլոգների համար: Աջակցություն է իրականացվում նաև ձեռնարկությունների վերազինման և արտահանման հարցերում<sup>5</sup>:

Ցավոք, այսօր հետազոտական և կրթական համակարգը Հայաստանում հնարավորություն չի տալիս բավարարելու թեթև արդյունաբերության հիմնական կարիքները, հատկապես, եթե դրանք դիտարկում ենք առաջանցիկ զարգացման տեսանկյունից: Թեթև արդյունաբերությանն առնչվող կրթությունը դեռևս չի մատուցում այն գիտելիքը, որն անհրաժեշտ է համակարգի զարգացման համար: Արդյունքում, այս ոլորտի կրթությունը չի գրավում երիտասարդներին: Դա պայմանավորված է ինչպես կրթական մեթոդներով, այնպես էլ մատուցվող նյութերի որակով և ժամկետանց լինելու հանգամանքով<sup>6</sup>:

Բացակայում են նորաձևության և դիզայնի արդի մտեցումները, տեխնիկա-

<sup>1</sup> Գործադիրը հաստատեց Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման ծրագիրը, 2-ը փետրվարի, 2023, <https://www.1lurer.am/hy/2023/02/02/Գործադիրը-հաստատեց-Հայաստանի-տեքստիլ-արդյունաբերության-զարգացման-ծրագիրը/874066>

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագիր»՝ հաստատված 2023 թ. փետրվարի 2-ի՝ ՀՀ կառավարության նիստում, <https://www.e-gov.am/sessions/archive/2023/02/02/>

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Как создать армянские бренды: правительство приняло программу развития текстильной отрасли, 2.02.2023, <https://ru.armeniasputnik.am/20230202/kak-sozdat-armyanskie-brendy-pravitelstvo-prinyalo-programmu-razvitiya-tekstilnoy-otrasli-54694461.html>

<sup>6</sup> Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագիր՝ հաստատված 2023 թ. փետրվարի 2-ի՝ ՀՀ կառավարության նիստում, <https://www.e-gov.am/sessions/archive/2023/02/02/>

պես հազեցած դասասենյակները և ժամանակակից ուսումնական պլանները, որոնք կարող են ապահովել նորածնության համակարգային կրթություն: Չկան նաև բավարար թվով ուսումնական կենտրոններ՝ գործնական ուսուցման դասընթացներ և հմտություններ փոխանցելու համար: Ընդհանուր առմամբ, բիզնես մոտեցումը և գոյություն ունեցող կրթական հաստատությունների և տեքստիլ արդյունաբերության «խաղացողների» միջև կապը գործնականում բացակայում են՝ հանգեցնելով ոլորտի ձեռնարկությունների համար հմուտ աշխատուժի սահմանափակ հասանելիությանը<sup>7</sup>:

Երկրում երկու բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում («Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա, մեքենասարքավորումների տեխնիկական շահագործում», «Հագուստի մոդելավորում») և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում («Հագուստի մոդելավորում»), ինչպես նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում տրամադրող կառույցներում առկա են ոլորտին առնչվող որոշ մասնագիտացումներ: 2020-2021 թթ. իրականացված ուսումնասիրությունը բացահայտել է, որ բոլոր ուսումնական հաստատություններում առկա է նորածնության և դիզայնի, հագուստի մոդելավորման, կարի արտադրության տեխնոլոգիայի ուսուցում<sup>8</sup>:

Տեքստիլ և տրիկոտաժի ոլորտում նախնական և միջին մասնագիտական կրթություն առկա է շուրջ մեկ տասնյակ պետական ուսումնական հաստատություններում, որոնց մեծ մասը գտնվում է մարզերում: Հիմնական մասնագիտացումներն են՝ հագուստի նախագծում-մոդելավորում և հագուստի պատրաստման տեխնոլոգիաներ<sup>9</sup>:

Ոլորտում գործել է «ՀՀ մասնագիտա-

կան կրթության և ուսուցման 2012-2016 թթ. բարեփոխումների ծրագիրը», նախնական և միջին մասնագիտական կրթությանը զգալի օժանդակություն է ցուցաբերվել Եվրոպական միության «Ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի» 2007 թ. և 2009 թ. գործողությունների պլանի, «Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտներում բարեփոխումների իրականացման միջոցով աղքատության կրճատմանն ուղղված» ծրագրի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱՀԾ) ու «Նախնական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում» ծրագրի շրջանակներում: Այդպիսով՝ Երևանում և մարզերում մոտ մեկ տասնյակ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ստեղծվել են կարի ժամանակակից արհեստանոցներ՝ զինված նորագույն մեքենասարքավորումներով: ՄԱՀԾ աջակցությամբ մշակվել է նաև մասնագիտական կրթության և ուսուցման նոր ձեռնարկ «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտացման համար<sup>10</sup>:

Առաջիկայում կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պատրաստվում է ներկայացնել «Մասնագիտական կրթության մասին» օրինագիծ, որը նախատեսված է արդյունաբերական կրթական ծրագրերի տեղայնացման համար: Առաջարկվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելը, որը մինչ այս կիրառվել է փորձնական ծրագրերով, դարձնել ինստիտուցիոնալ: Առաջարկվող նոր մոտեցմամբ կապահովվի լրացուցիչ հնարավորություն՝ կրթական գործընթացը կազմակերպելու արտադրությունում, որտեղ մարդիկ աշխատելու ընթացքում նաև կսովորեն<sup>11</sup>:

Ըստ կրթական հաստատությունների՝ նորագույն սարքավորումների հետ աշխատանքը, օտար լեզուների իմացությունը և անձնական նախաձեռնողականության դրսևորումն այն հմտություններն են, որոնք անհրաժեշտ է զարգացնել ուսանողների

<sup>7</sup> Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագրի՝ հաստատված 2023 թ. փետրվարի 2-ի՝ ՀՀ կառավարության նիստում, <https://www.e-gov.am/sessions/archive/2023/02/02/>

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> «Հայաստանի տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի զարգացման ռազմավարություն»՝ հաստատված 2013 թ. դեկտեմբերի 6-ի՝ ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստում, <https://mineconomy.am/media/2241/1473.pdf>

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> «Աշխատանքի վրա հիմնված ուսուցման ձևաչափը կդառնա ինստիտուցիոնալ». Ժամանակագրության, 2.02.2023, <https://www.fragir.am/2023/02/02/762359/>

մեջ: Բացի նշվածներից, կրթական հաստատություններն ունեն այլ խնդիրներ ևս, որոնք, պայմանավորված հայկական կրթական հաստատությունների և աշխարհի միջև փոխգործակցության, գիտելիքի և փորձի (այդ թվում՝ համատեղ կրթական ծրագրերի) փոխանակման բացակայությամբ, հանգեցնում են հայկական կրթական մեթոդների և մոտեցումների ժամկետանց դառնալուն<sup>12</sup>:

Խնդիրներից մեկը կրթական հաստատություններում ժամանակակից սարքավորումների և հարմարությունների բացակայությունն է: ՀՀ ոլորտային կրթական հաստատությունները հիմնականում չունեն անհրաժեշտ սարքավորումներ և տեխնոլոգիաներ, որոնք անհրաժեշտ են տեքստիլ արտադրության նորագույն տեխնիկայի վերաբերյալ ուսանողներին վերապատրաստելու համար: Արդյունքում, շրջանավարտները վատ են պատրաստված ոլորտի պահանջները բավարարելուն: Այս մարտահրավերը լուծելու նպատակով

ուլորտային կրթությամբ զբաղվող հաստատությունները կարող են համագործակցել ոլորտի «խաղացողների» հետ՝ ձեռք բերելու համար ինչպես ժամանակակից սարքավորումներ, այնպես էլ ֆինանսավորում և այլ անհրաժեշտ ռեսուրսներ:

Մյուս մարտահրավերը հնացած ուսումնական ծրագրերն են, որոնք կարող են չարտացոլել ոլորտի ներկայիս միտումներն ու գործելակերպը: Սա կարելի է լուծել՝ թարմացնելով և վերանայելով ուսումնական ծրագրերը՝ ներառելով նոր տեքստիլ տեխնոլոգիաներ, կայուն փորձառություն և միջգիտակարգային հմտություններ, ինչպիսիք են տեքստիլ արդյունաբերության կառավարումը, դիզայնի մտածողությունը, ճարտարագիտությունը և բիզնեսը: Նման մոտեցումը թույլ կտա շրջանավարտներին պատրաստ լինել աշխատելու արագ փոփոխվող ոլորտում և կարողանալ հարմարվել նոր տեխնոլոգիաներին ու գործելակերպին:

Տեքստիլ կրթության ևս մեկ մարտա-



<sup>12</sup> «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագիր»՝ հաստատված 2023 թ. փետրվարի 2-ի՝ ՀՀ կառավարության նիստում, <https://www.e-gov.am/sessions/archive/2023/02/02/>

հրավեր է որակյալ հրահանգիչների պակասը: Հաստատությունները կարող են լուծել այս խնդիրը՝ ներգրավելով ոլորտի փորձառու մասնագետներին՝ դասավանդելու և իրենց գործնական գիտելիքները ուսանողների հետ կիսելու համար և ուսանողներին կտրամադրի գործնական փորձառություն:

«Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023-2026 թվականների ծրագրում», որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից, նախատեսվում է Հայաստանում տեքստիլ արդյունաբերության աշխատուժի արտադրողականության աճ՝ 80 տոկոսով, ինչպես նաև արտադրության ծավալի մեծացում՝ մինչև 500 միլիոն ԱՄՆ դոլար<sup>13</sup>:

Հայաստանից տեքստիլի արտահանման ծավալը 2011-2020 թթ. տարեկան աճել է մոտ 40%-ով: 2022 թվականին արտահանումը գերազանցել է 200 միլիոն ԱՄՆ դոլարը: Այնուամենայնիվ, ձեռնարկություններում արտադրողականությունը մնում է ցածր մակարդակում: ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալներով՝ 2022 թվականին այն կազմել է ժամում մոտ 5 դոլար, իսկ մինչև 2026 թվականը նախատեսվում է հասցնել 8,3 ԱՄՆ դոլարի: Հայաստանը արտադրողականությամբ զգալիորեն զիջում է զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրներին: Դա, առաջին հերթին, պայմանավորված է մասնագետների պակասով: Արդյունաբերությունը չունի ոչ միայն փորձառու դերձակներ, այլև արդյունաբերական ու հագուստի դիզայներներ (հանրապետությունում կան դիզայներներ, որոնք կարող են ստեղծել հագուստի լավ մոդելներ, բայց չկան մասնագետներ, որոնք կարող են նման նմուշները վերածել սերիական արտադրության): Չկան նաև համապատասխան տեխնոլոգներ, որոնք արդյունավետորեն կկառավարեն արտադրական գործընթացը<sup>14</sup>:

Տեքստիլ արդյունաբերությունը հանրապետությունում զարգացած է հիմնականում պատվերով պատրաստվող եվրոպական, իսկ վերջին տարիներին՝ ռուսական մոդելների շնորհիվ: Բայց ակնհայտ է, որ դերձակության հատվածում Հայաստանը չի կարող մրցել Հարավարևելյան Ասիայի երկրների հետ միջազգային շուկաներում, իսկ ԵԱՏՄ շուկայում՝ Ուզբեկստանի հետ (որը, չլինելով ԵԱՏՄ անդամ, ընդլայնում է իր ներկայությունը եվրասիական շուկայում): Այս երկրները, անկասկած, մեծածախ պատվերները կկատարեն ավելի էժան, քան Հայաստանը<sup>15</sup>:

Ակնհայտ է, որ ոլորտի զարգացման համար հիմք կարող է հանդիսանալ ոլորտային կրթության վերածնունդը: Տեքստիլ կրթության «վերակենդանացումը» հնարավոր կլինի նոր տեխնոլոգիաների և նյութերի ներդրման, կայունության խթանման և այլ ոլորտների հետ միջառարկայական համագործակցության խթանման (ինչպիսիք են ճարտարագիտությունը, դիզայնը և բիզնեսը) արդյունքում:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ արտադրողների գրեթե 62%-ը չի համագործակցում կրթական հաստատությունների հետ: Ըստ մասնավոր հատվածի՝ կրթական հաստատություններում առկա խնդիրներից են.

- ուսումնական հաստատություններում կիրառական գիտելիք չփոխանցելը,
- համագործակցության ոչ պատշաճ կազմակերպումը, շահամիտվածության բացակայությունը,
- ուսումնական հաստատությունների հետ թույլ կապը,
- կրթության որակը<sup>16</sup>:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ տեքստիլագործական կրթության վերածննդի կարիք ունեն շատ երկրներ, բայց և այնպես, կան երկրներ, որոնք հայտնի են մրցունակ կրթությամբ և զարգացած կրթական ծրագրերով:

<sup>13</sup> Как создать армянские бренды: правительство приняло программу развития текстильной отрасли, 02.02.2023, <https://ru.armeniasputnik.am/20230202/kak-sozdat-armyanskie-brendy-pravitelstvo-prinyalo-programmu-razvitiya-tekstilnoy-otrasli-54694461.html>

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագիր»՝ հաստատված 2023 թ. փետրվարի 2-ի՝ «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագիր»՝ ՀՀ կառավարության նիստում, <https://www.e-gov.am/sessions/archive/2023/02/02/>

<sup>16</sup> Նույն տեղում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Ըստ ոլորտի մասնագետների, գործատուների, կրթական հաստատությունների և ուսանողների՝ լրացուցիչ վերագինման կարիք ունեցող բնագավառները<sup>17</sup>**

Գործադրում	Կրթական հաստատություն	Ուսանող
✓ Մարքեթինգային ծառայություններ (digital marketing)	✓ Fashion Design	✓ Մասնագիտական գործնական հմտություններ
✓ Միասնական ձևման ծառայություն	✓ Կոմպոզիցիա	✓ Մոդելավորում
✓ Միասնական դիզայնի ծառայություն	✓ Հազուստի նախագծում	✓ Կարոճև
✓ Հազուստի նախագծման և մոդելավորման հմտություններ	✓ Կարի տեխնոլոգիա	✓ Մասնագիտական տեսական հմտություններ
✓ Կառավարում	✓ Բատիկ	✓ Գրաֆիկական դիզայն
✓ ԹՎայնացում, «Assol» CAD ծրագրակազմ	✓ Ոճարանություն	✓ Պրոֆեսիոնալ լուսանկարչություն
✓ Նորաձևության դիզայնի դասընթաց	✓ Նյութագիտություն, հազուստի պատմություն	✓ Հազուստի նախագծման և մոդելավորման հմտություններ
✓ Կարի տեխնոլոգիա	✓ Մտեղծարարության զարգացում	✓ Արդյունավետ կառավարում և թվայնացում
✓ Արտադրության կառավարում	✓ Մակեթավորում	
✓ Կարի օպերատորների պատրաստում	✓ Կարի օպերատորների պատրաստում	

Տեքստիլ արդյունաբերության ոլորտի կրթական ծրագրերի արժեքն ու կարևորությունը երկրից երկիր զգալիորեն տարբերվում են: Որոշ գործոններ, ինչպիսիք է հերթությունները, տեխնոլոգիական առաջընթացը և կայունության խնդիրները, կարող են ազդել այս տարբերությունների վրա:

Օրինակ՝ ԱՄՆ-ն ունի աշխարհի լավագույն տեքստիլագործական կրթական ծրագրերից մի քանիսը, կրթական հաստատություններ (Հյուսիսային Կարոլինայի պետական համալսարանը և Նորաձևության տեխնոլոգիական ինստիտուտը (FIT)), որոնք առաջարկում են տեքստիլ ճարտարագիտության, տեքստիլ դիզայնի և տեքստիլի կառավարման կրթական աստիճաններ: Տեքստիլ արդյունաբերության կրթական ծրագրերն ԱՄՆ-ում հակված են կենտրոնանալու տեխնոլոգիական նորարարության և ձեռներեցության վրա: Առանձնահատուկ ուշադրություն է դարձրվում նոր նյութերի և արտադրության տեխնոլոգիաների կիրառմանը, ինչպես նաև կայուն և էկոլոգիապես մաքուր մե-

թոդների մշակմանը<sup>18</sup>: ԱՄՆ-ում տեքստիլ կրթության համար վճարը կարող է շատ տարբեր լինել՝ կախված հաստատությունից և ծրագրից: Ըստ CollegeBoard-ի՝ պետական 4-ամյա հաստատությունների ուսանողների ուսման և վճարների միջին տարեկան արժեքը 2020-2021 ուսումնական տարում կազմել է 10,560 ԱՄՆ դոլար, մասնավոր հաստատություններինը՝ 37,650<sup>19</sup> ԱՄՆ դոլար:

Միացյալ Թագավորությունում տեքստիլագործական կրթական ծրագրերը կենտրոնանում են ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաների համադրման վրա՝ շեշտադրելով ստեղծարարությունն ու վարպետությունը: Մեծ Բրիտանիան հայտնի է ոլորտային կրթության ծրագրերով. օրինակ՝ Մանչեսթերի և Լիդսի համալսարաններն առաջարկում են տեքստիլ ճարտարագիտության և դիզայնի ծրագրեր: Ոչ պակաս հայտնի են Արվեստի թագավորական քոլեջը և Գլազգոյի արվեստի դպրոցը, որոնք ունեն տեքստիլ դիզայնի մրցունակ ծրագրեր, որտեղ շեշտը դրվում է անհատական ոճերի և

<sup>17</sup> «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագիր»՝ հաստատված 2023 թ. փետրվարի 2-ի «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023 - 2026 թվականների ծրագիր» ՀՀ կառավարության նիստում, <https://www.e-gov.am/sessions/archive/2023/02/02/>

<sup>18</sup> Smith, J. (2021). The US Textile Industry Education Programs. Retrieved from, <https://www.textileworld.com/textile-world/features/2021/04/2021-state-of-the-u-s-textile-industry/>

<sup>19</sup> CollegeBoard. (2021). Average published undergraduate charges by sector and year. Retrieved from <https://research.collegeboard.org/trends/college-pricing/figures-tables/average-published-undergraduate-charges-sector-2020-21>

ստեղծագործական արտահայտման վրա<sup>20</sup>: Մեծ Բրիտանիայի պետական համալսարաններում տեքստիլագործական կրթական ծրագրերի ուսման վարձը տեղացի և ԵՄ ուսանողների համար սահմանվում է տարեկան 9250 ֆունտ ստեռլինգ, իսկ մասնավոր հաստատությունները կարող են ավելի բարձր վճարներ գանձել<sup>21</sup>:

Տեքստիլագործական կրթական ծրագրերը Շվեյցարիայում կենտրոնացած են տեքստիլ ճարտարագիտության տեխնիկական և գիտական տեսանկյունների վրա: Յյուրիխում գտնվող Շվեյցարիայի տեխնոլոգիական դաշնային ինստիտուտը (ETH Zurich) տեքստիլ ճարտարագիտական հետազոտությունների և կրթության առաջատար հաստատություն է, որն ապահովում է հետազոտություն և կրթություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են խելացի տեքստիլը և նյութագիտությունը<sup>22</sup>: Շվեյցարիայի դաշնային վիճակագրական գրասենյակի տվյալներով՝ 2020-2021 ուսումնական տարում շվեյցարական համալսարաններում միջազգային ուսանողների ուսման միջին տարեկան վճարը կազմել է 7620 շվեյցարական ֆունտ<sup>23</sup>:

Գերմանիայում տեքստիլագործական կրթական ծրագրերը կենտրոնացած են նոր նյութերի և տեխնոլոգիաների կիրառման վրա՝ շեշտադրվելով բնապահպանական պատասխանատվությունը: Դրեզդենի տեխնիկական և Շտուտգարտի համալսարանները, կենտրոնանալով կայուն տեքստիլի և առաջադեմ արտադրական տեխնոլոգիաների վրա, առաջարկում են տեքստիլ ճարտարագիտության և դիզայնի հիմնարար ծրագրեր, որոնք տեխնիկական գիտելիքը համատեղում են դիզայնի հմտությունների հետ<sup>24</sup>: Գերմանիայում

պետական բուհերը բակալավրիատի ծրագրերի համար ուսման վարձ չեն գանձում: Այնուամենայնիվ, ուսանողները կարող են նաև ստիպված լինել վճարել կիսամյակի վճար, որը, սովորաբար, տատանվում է 150-ից մինչև 300 եվրոյի սահմաններում՝ մեկ կիսամյակի համար: Մասնավոր հաստատությունները կարող են ավելի բարձր վճարներ գանձել<sup>25</sup>:

Ճապոնական տեքստիլագործական կրթական ծրագրերն ընդգծում են ավանդական մեթոդներն ու արհեստագործությունը՝ շեշտը դնելով մշակութային ժառանգության պահպանման վրա: Ճապոնիան հայտնի է իր ավանդական տեքստիլ տեխնիկայով և ունի մի քանի համալսարաններ (Կիոտոյի տեխնոլոգիական ինստիտուտը և Շինջուի համալսարանը և այլն), որոնք համատեղում են ավանդական և ժամանակակից մեթոդները՝ մասնագետներ պատրաստելով այնպիսի ոլորտների համար, ինչպիսիք են նորածնության դիզայնը և տեքստիլ ճարտարագիտությունը<sup>26</sup>: Ճապոնիայի ուսանողական կազմակերպության տվյալներով՝ 2020-2021 ուսումնական տարում ճապոնական համալսարաններում միջազգային ուսանողների ուսման միջին տարեկան արժեքը կազմել է 820,000 իեն (մոտ 7,500 ԱՄՆ դոլար)<sup>27</sup>:

Հնդկաստանը տեքստիլի արտադրության երկար պատմություն ունի և մի քանի համալսարան, ներառյալ Նորաձևության տեխնոլոգիաների ազգային ինստիտուտը (NIFT), որոնք առաջարկում են տեքստիլ դիզայնի և կառավարման կրթական աստիճաններ<sup>28</sup>: Նորաձևության տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի բակալավրիատի ծրագրերի ուսման վարձը տա-

<sup>20</sup> Jones, S. (2021). Textile Education Programs in the UK.

<sup>21</sup> Universities and Colleges Admissions Service. (2021). Tuition fees and finance for UK/EU students. Retrieved April 23, 2023, from <https://www.ucas.com/finance/tuition-fees-and-student-finance/tuition-fees-and-finance-uk-eu-students>

<sup>22</sup> Brown, M. (2021). Textile Education Programs in Switzerland.

<sup>23</sup> Swiss Federal Statistical Office. (2020). Average annual tuition fee for international students at Swiss universities in the 2020-21 academic year. <https://www.bfs.admin.ch/bfs/en/home/statistics/education-science/higher-education/universities/finance/fees.html>

<sup>24</sup> Nguyen, K. (2021). Textile Education Programs in Germany.

<sup>25</sup> DAAD. (2022, March 24). Studying in Germany - Tuition Fees. Retrieved April 23, 2023, <https://www.daad.de/en/study-and-research-in-germany/studying-in-germany/tuition-fees/>

<sup>26</sup> Lee, H. (2021). Japanese Textile Education Programs.

<sup>27</sup> Japan Student Services Organization. (2021). Annual Tuition Fee (in Japanese yen) for Foreign Students by Institution, Academic Year 2020. [https://www.jasso.go.jp/en/study\\_j/temporary/tuition/2020.html](https://www.jasso.go.jp/en/study_j/temporary/tuition/2020.html)

<sup>28</sup> Wang, L. (2021). Textile Education Programs in India.

տանվում է տարեկան 2,15-ից մինչև 2,65 ռուբլի (մոտ 3,000–3,600 ԱՄՆ դոլար)<sup>29</sup>:

Բացի ուսման վարձից, ուսանողներից կարող են պահանջվել նաև լրացուցիչ վճարներ սարքավորումների, ստուդիայի տարածքի, պարագաների, նյութերի և էքսկուրսիաների համար:

Ընդհանուր առմամբ, տեքստիլագործական կրթության ոլորտում որակավորում ստանալը կարող է ծախսատար լինել, բայց արժեքը կարող է մեծապես տարբերվել կախված երկրից և հաստատությունից:

Քանի որ ՀՀ-ում տեքստիլ արդյունաբերությունն այժմ կայացման փուլում է, ուստի, նախ և առաջ, անհրաժեշտ է ձեռնամուխ լինել ոլորտի նեղ մասնագետների՝ կառավարիչների պատրաստմանը:

Խնդրի լուծման միջոց կարող են լինել տնտեսագիտական բուհերի կողմից միջգիտակարգային սկզբունքով պիլոտային մագիստրոսական կրթական ծրագրերի մշակումը և իրականացումը: Հատկապես ՀՊՏՀ-ի տեսանկյունից, դա իրագործելի է, քանի որ արդեն իսկ առկա է նեղ ոլորտային նման ծրագրերի հաջող փորձ, մասնավորապես՝ «Առողջապահության կառավարում և վարչարարություն» մագիստրոսական ծրագիրը: Միջգիտակարգային մագիստրոսական ծրագիրը հնարավոր է կազմակերպել Էկոնոմիկայի նախարարության Թեթև արդյունաբերության վարչության, ինչպես նաև Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հետ համատեղ:

«Տեքստիլ արդյունաբերության կառավարում» կրթական ծրագիրը նպատակաուղղված կլինի համապատասխան ոլորտում կառավարման ունակությունների ձևավորմանը:

Տվյալ ծրագրի շրջանակում անհրաժեշտություն կառաջանա սերտ համագործակցություն ձևավորելու առաջատար կազմակերպությունների հետ՝ ուսանողների փորձառության վայրի և հետագա աշխատանքի տեղավորման խնդիրների լուծման նպատակով: Ուսումնական գործըն-

թացի համար, բացի բուհի ենթակառուցվածքներից, կօգտագործվեն նաև ոլորտային հաստատությունների ենթակառուցվածքները՝ գործընկերային հարաբերությունների հիման վրա, ինչպես նաև սարքավորումները և տեխնոլոգիական հնարավորությունները: Այսպիսով՝ հնարավոր կդառնա արդեն իսկ սարքավորումներով վերազինված արտադրական կազմակերպություններում անցկացնել ուսումնական գործընթացի գործնական բաղադրիչը: Արտադրողների հետ նման փոխգործակցությամբ կուժեղանա գործատու-համալսարան կապը՝ կվերանա նաև առկա կարևոր հիմնախնդիրներից մեկը՝ կապի խզվածությունը:

Շատ կարևոր է մագիստրոսական կրթական ծրագրի՝ ոլորտի զարգացումներին համապատասխանելիության ապահովումը: Ծրագիրը պարտադիր կերպով պետք է ներառի տեքստիլ արդյունաբերության ոլորտի իրավական կարգավորմանը, ֆինանսներին, տեքստիլ արդյունաբերության նորագույն տեխնոլոգիաներին և ամենակարևորը՝ տեքստիլ արդյունաբերության ոլորտում ընդգրկված հաստատությունների գործունեության կառավարմանն առնչվող հարցեր: Քանի որ նախատեսվում է միջգիտակարգային մագիստրոսական ծրագիր, ապա մյուս բուհերի կողմից կկազմակերպվի կարուճակ տեխնոլոգիայի, հագուստի մոդելավորման, նախագծման և դիզայնի, գրաֆիկայի և այլ մասնագիտական առարկաների ուսուցումը:

Համաշխարհային փորձում նորաձևության, տեքստիլի և շքեղության ապրանքների գծով մագիստրոսի կոչում ունեցող մասնագետի միջին աշխատավարձը տատանվում է ըստ աշխատանքի տեղավորման ընկերության՝ տարեկան 60,000-ից 80,000<sup>30</sup> ԱՄՆ դոլար: Միջազգային փորձով հայտնի՝ տեքստիլ ոլորտին առնչվող մագիստրոսական ծրագրերը հիմնականում հիմնված են արդյունաբերության, շուկայավարման, ներառյալ ապրանքների վաճառքի և առաջխաղացման վրա՝ պա-

<sup>29</sup> National Institute of Fashion Technology. (n.d.). Undergraduate Programs. Retrieved April 23, 2023, <https://www.nift.ac.in/ugprograms/fees-structure/>

<sup>30</sup> Магистр в области моды, текстиля и предметов роскоши, <https://free-apply.com/ru/articles/speciality/47?fbclid=IwAR18TEVH61pasEZutyIld0VHI6rUvyk68G4MqdIxo82QZzled56qv-61NI4>



ԱՂՅՈՒՍԱԿ 2

**Նորածնության, տեքստիլի և շքեղության ապրանքների ոլորտի մագիստրոսական ծրագրեր առաջարկող երկրների ցանկը, համալսարանների քանակը և տարեկան ուսման վարձը<sup>31</sup>**

<b>Երկիրը</b>	<b>Համալսարանների քանակը</b>	<b>Տարեկան ուսման վարձը (դրամին համարժեք)</b>
Հնդկաստան	333	396 228
ԱՄՆ	312	6 828 005
Չինաստան	195	936 608
Գերմանիա	53	1 245 228
Ֆրանսիա	50	1 243 783
Ճապոնիա	50	2 609 764
Մեծ Բրիտանիա	46	3 297 736
Մեքսիկա	34	2 907 526
Պարսկաստան	33	730 458
Պակիստան	31	860 138
Թուրքիա	31	1 423 491
Ֆիլիպիններ	31	789 302
Ուկրաինա	26	464 737
Բրազիլիա	21	389 541
Քենիա	19	218 803
Ֆինլանդիա	19	1 158 561
Լեհաստան	19	1 042 077
Կուբա	16	1 120 276
Իսրայել	16	2 759 176
Սաուդյան Արաբիա	14	4 345 764
Իսպանիա	14	1 421 513
Կորեայի Հանրապետություն	14	1 653 713
Թունիս	13	969 654
Կանադա	13	1 694 878
Թայվան	12	745 078

հանջելով նաև աշխատանքային գիտելիք տեքստիլի և շքեղության ապրանքների արտադրության փուլերի վերաբերյալ:

Վերոնշյալ կրթական ծրագրի ներդրման նպատակահարմարության վերաբերյալ իրականացրել ենք հարցում, որին մասնակցել են 200 ուսանող (ՀՊՏՀ, ՀԱՊՀ մասնաճյուղեր, ՀԳՊԱ) և ոլորտում զբաղվածներ:

Հարցման արդյունքների համաձայն՝ այս ոլորտի մագիստրոսական կրթություն ստանալուն կողմ էր հարցվողների բա-

ցարձակ մեծամասնությունը՝ 84.5%: Ընդ որում, նման մագիստրոսական ծրագրի ներդրման գաղափարը հատկապես մեծ ոգևորությամբ ընդունեցին այս ոլորտում զբաղված գործարարները: Կրթություն ստանալու ցանկություն ունեցողների 91%-ը իգական սեռի ներկայացուցիչ է:

Տեքստիլի ոլորտի մագիստրոսական ծրագրերի առկայության մասին վկայում են գծապատկեր 1-ի տվյալները:

Ներկայում աշխատաշուկայում առկա է տեքստիլ արդյունաբերության ոլորտին

<sup>31</sup> Магистр в области моды, текстиля и предметов роскоши, <https://free-apply.com/ru/articles/speciality/47?fbclid=I-wAR18TEVH61pasEZutyIldOVHi6rUvyk68G4Mqdlxo82QZzled56qy-61NI4>

🏠 1 938

Նորածնություն, տեքստիլ և շքեղության ապրանքների ոլորտին առնչվող մագիստրոսական ծրագրեր

🕒 1-2 Տարի

Ուսման տևողություն

📄 ~ 2 104 250 << դրամ

Տարեկան ուսման վարձ

📄 ~ 33 631 594 << դրամ

Տարեկան աշխատավարձ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

### Տեքստիլի ոլորտի մագիստրոսական ծրագրերն աշխարհում<sup>32</sup>

խորությամբ տիրապետող մասնագետների պահանջ. մասնագետներ, որոնք, միաժամանակ, օժտված կլինեն տնտեսության ու բիզնեսի կազմակերպման և կառավարման հմտություններով: Կրթական ծրագրի ներդրմամբ մենք կարող ենք բավարարել այդ պահանջը և պատրաստել կադրեր, որոնց կարիքն ունեն տեքստիլ

արդյունաբերության ոլորտի կազմակերպությունները: Տվյալ մասնագետները կկարողանան ոլորտում զբաղեցնել վարչական կամ կառավարչական այնպիսի պաշտոններ, որոնց համար պահանջվում է տնտեսագիտությանը, կառավարմանը և տեքստիլի արտադրությանը առնչվող արդիական ու առավել խոր գիտելիք:

<sup>32</sup> Магистр в области моды, текстиля и предметов роскоши, <https://free-apply.com/ru/articles/speciality/47?fbclid=IwAR18TEVH6IpasEZutyIldOVHi6rUvyk68G4Mqdlxo82QZzled56qv-61NI4>

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գործադիրը հաստատեց Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման ծրագիրը, 2-ը փետրվարի, 2023, <https://www.1lurer.am/hy/2023/02/02/Գործադիրը-հաստատեց-Հայաստանի-տեքստիլ-արդյունաբերության-զարգացման-ծրագիրը/874066>
2. «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման 2023-2026 թվականների ծրագիր»՝ հաստատված 2023 թ. փետրվարի 2-ի՝ << կառավարության նիստում, <https://www.e-gov.am/sessions/archive/2023/02/02/>
3. «Աշխատանքի վրա հիմնված ուսուցման ձևաչափը կդառնա ինստիտուցիոնալ». Ժամանա Անդրեասյան, 2.02.2023, <https://www.Iragir.am/2023/02/02/762359/>
4. Как создать армянские бренды: правительство приняло программу развития текстильной отрасли, 02.02.2023, <https://ru.armeniasputnik.am/20230202/kak-sozdat-armyanskie-brendy-pravitelstvo-prinyalo-programmu-razvitiya-tekstilnoy-otrasli-54694461.html>
5. Магистр в области моды, текстиля и предметов роскоши, <https://free-apply.com/ru/articles/speciality/47?fbclid=IwAR18TEVH6IpasEZutyIldOVHi6rUvyk68G4Mqdlxo82QZzled56qv-61NI4>
6. Brown, M. (2021). Textile Education Programs in Switzerland.
7. CollegeBoard. (2021). Average published undergraduate charges by sector and year. <https://research.collegeboard.org/trends/college-pricing/figures-tables/average-published-undergraduate-charges-sector-2020-21>
8. DAAD. (2022, March 24). Studying in Germany - Tuition Fees. Retrieved April 23, 2023, <https://www.daad.de/en/study-and-research-in-germany/studying-in-germany/tuition-fees/>
9. "Fashion & Textile Industry 4.0 - Opportunities & Challenges for Education 4.0: Proceedings of Online National Conference on Fashion Apparel and Textile (NCFAT'20) 14th October 2020 | Amity University, Uttar Pradesh theme." (2020), <https://www.amity.edu/asft/pdf/NCFAT-20.pdf>
10. Japan Student Services Organization. (2021). Annual Tuition Fee (in Japanese yen) for Foreign Students by Institution, Academic Year 2020. [https://www.jasso.go.jp/en/study\\_j/temporary/tuition/2020.html](https://www.jasso.go.jp/en/study_j/temporary/tuition/2020.html)

11. Jones, S. (2021). Textile Education Programs in the UK. Retrieved from [
12. Lee, H. (2021). Japanese Textile Education Programs.
13. National Institute of Fashion Technology. (n.d.). Undergraduate Programs. Retrieved April 23, 2023, from <https://www.nift.ac.in/ugprograms/fees-structure/>
14. National Institute of Fashion Technology. (n.d.). Undergraduate Programs. Retrieved April 23, 2023, <https://www.nift.ac.in/ugprograms/fees-structure/>
15. Nguyen, K. (2021). Textile Education Programs in Germany.
16. Smith, J. (2021). The US Textile Industry Education Programs, <https://www.textileworld.com/textile-world/features/2021/04/2021-state-of-the-u-s-textile-industry/>
17. Swiss Federal Statistical Office. (2020). Average annual tuition fee for international students at Swiss universities in the 2020-21 academic year. <https://www.bfs.admin.ch/bfs/en/home/statistics/education-science/higher-education/universities/finance/fees.html>
18. Universities and Colleges Admissions Service. (2021). Tuition fees and finance for UK/EU students. Retrieved April 23, 2023, <https://www.ucas.com/finance/tuition-fees-and-student-finance/tuition-fees-and-finance-uk-eu-students>
19. Wang, L. (2021). Textile Education Programs in India.

**Тереза ШАГРИМАНЯН**

*Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ*

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

### **ВОЗРОЖДЕНИЕ ТЕКСТИЛЬНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ: КОНЦЕПТ КАДРОВОГО ПОТЕНЦИАЛА**

Текстильная промышленность, являясь одной из наиболее динамично развивающихся подотраслей экономики РА, предполагает, что потребность в соответствующих специалистах в этой области будет возрастать с каждым годом, поэтому подготовка таких кадров является велением времени. В связи с тем, что у нас ранее не было соответствующей образовательной программы, мы должны ориентироваться на международные образовательные программы, соответствующие профессиональным стандартам в области управления текстильной промышленностью, стараться локализовать ее, учитывая зачаточную стадию развития отрасли, максимально избегая потрясений. На данном этапе важной предпосылкой для обеспечения возрождения текстильного образования является подготовка специалистов в странах с развитой отраслевой системой образования.

**Ключевые слова:** *образовательные программы, развитие текстильной промышленности, менеджер текстильной промышленности, магистр текстильной промышленности*

**Tereza SHAHRIMANYAN**

*Administrator at «Amberd» Research Center, ASUE*

MARKETS AND COMPETITION

### **REVIVAL OF THE TEXTILE INDUSTRY: CONCEPT OF PERSONNEL POTENTIAL**

The textile industry, being one of the most dynamically developing sub-sectors of the RA economy, implies that the demand for relevant specialists in the field will increase year by year. Therefore, it has become crucial to prioritize the preparation of such personnel. As the country lacked an appropriate educational program in the past, we should be guided by international educational programs corresponding to professional standards in the field of textile industry management. These programs should be localized taking into account the embryonic stage of the sector's development as much as possible, to avoid shocks. At this stage, in order to ensure the revival of the textile education, the training of specialists in countries with a developed sectoral education system is an important prerequisite.

**Keywords:** *educational programs, textile industry development, textile industry manager, textile industry master*

